



ՎՐԱՍՏԱՆ - ԵՍ

ՔՐԻՍՏԻԱՆ ԴԱՆԻԵԼՍՈՆ. «ԲԱՆԱԿՑՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՄՈՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԵԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը ներգրավվել է բոլոր կողմերի ղեկավարների հետ: Այցի շրջանակներում եվրախորհրդի նախագահի անձնակազմի անդամները հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլու, ընդդիմադիր կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Մարտի 12-ին, Օրբելիանիների պալատում, կայացավ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու և Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի անձնակազմի ներկայացուցիչ Քրիստիան Դանիելսոնի հանդիպումը, որին ներկա էր Վրաստանում ԵՄ դեսպան Կառլ Զարցեյլը:

Սալոմե Ջուրաբիշվիլին ողջունեց Քրիստիան Դանիելսոնի ժամանումը Վրաստան և ԵՄ-ի աջակցությունը բանակցություններին և երկխոսությանը:

Վրաստանի նախագահը Քրիստիան Դանիելսոնին համապարփակ տեղեկատվություն տրամադրեց Վրաստանի ընտրությունների, խորհրդարանում կուսակցությունների իրավունքների և նրանց տրամադրության տակ գտնվող օրենսդրական լծակների վերաբերյալ:

Իր հերթին, Քրիստիան Դանիելսոնը հայտարարեց, որ բանակցող կողմերի մոտ համաձայնության հասնելու

մեծ պատասխանատվություն կա:

Նույն օրը կառավարության գրասենյակում կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլու և Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի անձնակազմի ներկայացուցիչ Քրիստիան Դանիելսոնի հանդիպումը:

Հանդիպմանը Իրակլի Գաբրիաշվիլին իր երախտիքը հայտնեց Եվրախորհրդի նախագահ Շառլ Միշելին՝ Վրաստանում քաղաքական երկխոսությունը նախաձեռնելու կապակցությամբ, և կրկին ընդգծեց արդյունքների վրա կողմնորոշված բանակցություններին կառավարող թիմի մասնակցության պատրաստակամությունը: Վարչապետը նշեց, որ կառավարող թիմը կմասնակցի Եվրամիության աջակցությամբ անցկացվող բոլոր ձեռնարկներին, որոնք ուղղված կլինեն խորհրդատվությունների անցկացմանն ու իրավիճակի լարվածության թուլացմանը:

Վրաստանի վարչապետն ու Եվրախորհրդի նախագահի անձնակազմի ներկայացուցիչը քննարկեցին նաև այն հարցերը, որոնց շուրջ ընդդիմության և կառավարող թիմի դիրքորոշումները տարբերվում են: Հանդիպմանը կրկին ընդգծվեց, որ նշանակալի է, որպեսզի



բոլոր կողմերը առաջնորդվեն երկրի և ժողովրդի շահերից ելնելով, քանի որ միայն այդպես հնարավոր կլինի հասնել իրավիճակի ապաբեռնացմանն ու փոխընդունելի արդյունքի:

Իրակլի Գաբրիաշվիլին և Քրիստիան Դանիելսոնն անդրադարձան նաև վարչապետի Բյուրոսել այցին, որի ընթացքում կանցկացվեն բարձր մակարդակի հանդիպումներ ինչպես եվամիությունում, Եվրախորհրդում և Եվրախորհրդարանում, այնպես էլ՝ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում:

Հանդիպման ավատին, կայացած մամուլի ասուլիսին, Վրաստանի վարչապետը հայտարարեց, որ ընդդիմության հետ երկխոսությանը կներգրավվեն «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալալվաձեն և խորհրդարանի փոխնախագահ Կախա Կուճավան:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԿԱՐԵՎՈՐՎԵՑ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հանգները Վրաստանի կարելու ռազմավարական գործընկեր է, և կառավարությունը բարձր է գնահատում պաշտոնական Վաշինգտոնի ամուր աջակցությունը մի շարք ոլորտներում, այդ թվում՝ երկրում բարեփոխումների իրականացմա-

նը, ինչպես նաև Covid-19 համավարակով առաջացած սոցիալ-տնտեսական դժվարությունների հաղթահարմանը:

Հանդիպմանը կողմերն անդրադարձան նաև երկրում ընթացող քաղաքական գործընթացներին, նշելով, որ, աշխարհում և տարածաշրջանում առկա մարտահրավերների ֆոնի ներքո, կողմե-

րը պետք է ջանքեր գործադրեն Վրաստանում ընթացող քաղաքական գործընթացները կառուցողական երկխոսության ռեժիմում անցկացնելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվեց նաև տարածաշրջանային անվտանգության և Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված ծանր իրավիճակը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՈՒ ՆԻՆՈՃՄԻՆԴԱՅԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏ



Մարտի 10-ին, Վրաստանի խորհրդարանի Ախալքալաքիի և Նինոծմինդայի մեծամասնական պատգամավոր, ագրարային հարցերի կոմիտեի փոխնախագահ Սամվել Մանուկյանի նախագահությամբ, անցկացվեց կոմիտեի նիստ, որտեղ, կոմիտեի վերահսկողության գործունեության շրջանակներում, ներկայացվեց պարենի ազգային գործակալության կողմից 2020 թվականին իրականացված գործունեության հաշվետվությունը, որով հանդես եկավ այդ գերատեսչության պետ Ջուրաբ Զեկուրաշվիլին:

և գյուղատնտեսության առաջին փոխնախարար Գիորգի Խանիաշվիլին:

Սամվել Մանուկյանի նախագահությամբ կայացած ագրարային հարցերի խորհրդարանական կոմիտեի նիստին ներկայացվեց նաև պարենամթերքի անվտանգության, անասնաբուժության և բույսերի պահպանման օրենքում փոփոխությունների կատարման օրինագիծը:

Նշենք, որ նորանկախ Վրաստանի խորհրդարանի պատմության մեջ առաջին անգամ Ախալքալաքին և Նինոծմինդան ներկայացնող պատգամավորն ընտրվեց կոմիտեի փոխնախագահ և առաջին անգամ է, որ նրա նախագահությամբ անցկացվեց կոմիտեի նիստը:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՄԻՋԻՆՔԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ


(Սկիզբը՝ 1-ին էջում)

Միջինքի տոնը հանդիսավորությամբ նշվեց նաև Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում: Վրաստանի մայրաքաղաքի երկու եկեղեցիներում ծեսից հետո՝ եկեղեցիների խաչքաղորներ Յուրի Երեմյա-

նի և Գրիգորի Նալբանդյանի կողմից հավատացյալները հյուրասիրվեցին հայկական գաթայով և ուրախացան իրենց բաժին ընկած օրհնված խաչի անակնկալով:

Սամյխե-Ջավախեթիի և Ծալկայի առաջնորդական փոխանորդության Ախալքալաքիի «Սուր Խաչ» և Բաթումիի «Սուրբ Փրկիչ» եկեղեցիներում Միջինքի տոնը վերածվեց հայկական գաթայի փառատոնի: Հավատացյալները ժամերգության էին եկել այդ օրվա համար հատուկ թխած տարատեսակ գաթաներով:

Էջը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ



ԱՄՆ

ԳՐԵԹԵ 2 ՏՐԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Մարտի 7-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի Սենատը հաստատել է 1,9 տրիլիոն դոլարի տնտեսական օգնության փաթեթը: «Հանրապետական» սենատորներից ոչ մեկը չի աջակցել Կոնգրեսի վերին պալատում տնտեսական օգնության ծրագրին:

Համավարակի մեկնարկից ի վեր, հաստատված օգնության երրորդ փաթեթը նախատեսում է միանվագ վճար 1 400 ԱՄՆ դոլարի չափով, որը կստանա երկրի բնակչության մեծ մասը: Այսպես կոչված ամերիկյան փրկարարական ծրագիրը 350 միլիարդ դոլար է հատկացնում պետական և տեղական կառավարություններին, իսկ շուրջ 130 միլիարդ դոլար՝ դպրոցներին:

Ծրագիրը նաև 49 միլիարդ դոլար է հատկացնում «Կովիդ 19»-ի ընդլայնված փորձարկումների և հետազոտությունների համար, ինչպես նաև 14 միլիարդ դոլար՝ պատվաստանյութերի բաշխման համար:

Օրինագիծը ներառում է նաև դրամաշնորհներ փոքր բիզնեսի համար:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ BREXIT-Ի ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿՐՃԱՏՎԵԼ Է

Մեծ Բրիտանիայից Եվրամիության երկրների ապրանքների արտահանման ցուցանիշները հունվարին 40,7 տոկոսով նվազել են 2020 թվականի դեկտեմբերի 31-ին Brexit-ից հետո անցումային շրջանի ավարտի հետևանքով: Կրճատվել է նաև ԵՄ-ից ներմուծումը, նախորդ ամսվա տվյալների համեմատ՝ 28,8 տոկոսով:

Հունվարին Մեծ Բրիտանիայի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) այդ ֆոնին 2020 թվականի դեկտեմբերի համեմատ կրճատվել է 2,9 տոկոսով: Փորձագետները հանգամանորեն բացատրում են նրանով, որ հունվարի 4-ից երկրում կորոնավիրուսի բրիտանական մանրէա-հիմքի հայտնաբերումից հետո սահմանվել է համազգային կարանտինի ռեժիմ: Առավելագույնս խիստ սահմանափակումները, որոնց մեծ մասը մինչ օրս գործում է, ենթադրում են բոլոր հաստատությունների և խանութների փակում, բացառությամբ՝ այն խանութների, որոնք առաջին անհրաժեշտության ապարանքներ են վաճառում:

ՍԻՐԻԱ ԿՐՈՆԱԿԻՐՈՒՄՈՎ ՎԱՐԱԿՎԵԼ ԵՆ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՐՆ ՈՒ ՆՐԱ ԿԻՆԸ

Միրիայի նախագահ Բաշար Ասադն ու նրա կինը՝ Ասման, վարակվել են կորոնավիրուսով:

«Նախագահ Ասադն ու նրա կինը տանն են և կարանտինը պահպանելով կշարունակեն իրենց աշխատանքները: Կարանտինը կտևի 2-3 շաբաթ»,- ասված է նախագահի մամուլի ծառայության հաղորդագրությունում:

Նախագահի մամուլի ծառայությունը հայտնել է, որ Ասադի և առաջին տիկնոջ վիճակը կայուն է:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ԻՐԱՎԱՅԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մարտի 11-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարարի աշխատակազմը, ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդին եւ ոչ կառավարական մյուս կազմակերպություններին ներկայացրեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարության ծրագիրը:



Յերի ներկայացուցիչների ակտիվ ներգրավմամբ: Հանդիպմանը պետնախարարի առաջին տեղակալ Լիա Գիգաուրիին ներկայացրեց «Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարության եւ 2015-2020 թվականների գործողության ծրագրի իրականացման գնահատականների» արդյունքները: Հանդիպման մասնակիցներին մանրամասն տեղեկատվություն ներկայացվեց «Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021-2026 թվականների պետական ռազմավարության ծրագրի» վերաբերյալ:

Հանդիպմանը ողջույնի խոսքով ելույթ ունեցան հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին, ԱՄՆ-ի միջազգային զարգացման «ժողովրդավարության, մարդու իրավունքների եւ կառավարման» գործակալության գրասենյակի ղեկավար Ադամ Շմիդտը:

Իր խոսքում, պետնախարարը ներկայացրեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման քաղաքականության տեսլականը, նպատակներն ու խնդիրները, ընդգծեց վերոնշյալ քաղաքականության շրջանակներում ձեռքբերումները, առկա մարտահրավերները, խոսեց առաջիկա ծրագրերի մասին:

Իր ելույթում, Թեա Ախվլեդիանին, մասնավորապես, ընդգծեց.

- Ճյուղային նախարարությունների սերտ համագործակցությամբ եւ ոչ կառավարական կազմակերպությունների ակտիվ ներգրավմամբ, մշակվեց 2021-2026 թվականների քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարությունը անցյալ շաբաթ ներկայացվեց կառավարությանը, մոտ օրերս կներկայացվի խորհրդարանին: Քննարկումների արդյունքում կմշակվի ծրագրի վերջնական տարբերակը, որը կիրականացվի ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի անդամների ոչ կառավարական եւ միջազգային կազմակերպություններին:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ «Քաղաքացիական ինտեգրման եւ ազգամիջյան հարաբերությունների կենտրոնի» ղեկավար Կախա Գաբունիան, Հանրային հեռարձակման հոգաբարձական խորհրդի անդամ Բելլա Օսիպովան, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի ղեկավար Ռուսուդան Ճանտուրիան:

Միջոցառումն անցկացվեց ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) եւ Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG), հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության եւ ինտեգրման աջակցության ծրագրի (PITA) աջակցությամբ:

ՄԻՍՈՆ ԿԻԼԱՁԵ

ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՆ ԱԶԳԵԼ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ

Միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) հրապարակեց 2020 թվականին Վրաստանում անցկացված խորհրդարանական ընտրությունների տեխնիկական գնահատականի հաշվետվությունը:



Նշենք, որ խորհրդարանական ընտրությունները Վրաստանում անցկացվեցին երկու փուլով՝ հոկտեմբերի 31-ին եւ նոյեմբերի 21-ին: Կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունը 10-րդ գումարման օրենսդրական մարմնի 150 մանդատից ստացավ 90-ը: Մնացած 60 մանդատները բաշխվեցին ընդդիմադիր 8 սուբյեկտների միջեւ: Ընդդիմությունը չի ճանաչում քվեարկության արդյունքները, ընտրությունները համարում է կեղծված եւ հրաժարվում է իր մանդատներից: Ընդդիմությունը պահանջում է անցկացնել վաղաժամկետ ընտրություններ՝ ընտրական նոր վարչակազմի պայմաններում: Ընդհանուր որոշման համար կառավարությունը եւ ընդդիմությունը անց են կացնում բանակցություններ:

IRI հաշվետվության համաձայն, 2020 թվականի ընտրություններին նախորդել էին սահմանադրական նշանակալի փոփոխություններ եւ ընտրական օրենսգրքի բարեփոխումը, որը սկսվել էր 2019 թվականի հունիսից եւ, բանակցային մի շարք փուլերի արդյունքում, փոխել Վրաստանում մինչ այդ գործող խառը ընտրահամակարգը, նվազեցրել համամասնական կարգով ընտրաշեմը, այն 5 տոկոսից հասցնելով մեկ տոկոսի, ինչը Վրաստանի քաղաքացիներին թույլ տվեց քվեարկել քաղաքական երրորդ ուժի օգտին: Ինչպես նշված է հաշվետվության մեջ, այդ փոփոխությունները նոր բարեփոխումների իրացման հնարավորություն ընձեռեցին, որոնց հիմնական նպատակը՝ քաղաքական մրցակցության եւ գեներալիզացիայի բազմազանության հիմքեր դրեց:

Սահմանադրական բարեփոխումները գնահատվեցին որպես առաջընթաց քայլ, քանի որ դրանք ուղեկցվում էին ընտրությունների մասին օրենքի փոփոխություններով, եւ որոնք մասնակիորեն հաշվի էին առնում 2018 թվականի նախագահական ընտրությունները՝ միջազգային եւ տեղի դիտորդների հանձնարարականները:

Մյուս կողմից, 2020 թվականի նախընտրական ժամանակահատվածում քայլեր ձեռնարկվեցին առավել բազմակուսակցական կառավարության ձեւավորման, ընտրական քարոզարշավում ծախսերի թափանցիկության եւ ընտրական օրենքի կատարման ուղղությամբ:

Ըստ IRI-ի հաշվետվության, նախընտրական իրավիճակը հիմնականում հանգիստ էր եւ քաղաքականապես մրցակցային, անմշան բացառություններով: Քաղաքական կուսակցություններին եւ թեկնածուներին տրվել էր քարոզարշավի ազատություն, իսկ քաղաքացիների համար ապահովվել էր քաղաքական տարբեր լրատվամիջոցների եւ տեղեկատվության մատչելիություն: Թեպետ թեկնածուների միջեւ բանավեճերի բացակայությունը եւ լրատվամիջոցների խիստ բեռնացումը հանգեցրին նրան, որ ընտրական գործընթացը կենտրոնացված էր առանձին անձանց եւ խոսքերի եւ ոչ թե քաղաքականության կամ քաղաքացիների պահանջների վրա:

Հաշվետվության մեջ առանձնակի նշվում է, որ համավարակի պայմաններում Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կարողացավ ապահովել ընտրությունների անցկացումը՝ պաշտպանել քաղաքացիների ընտրության իրավունքը: IRI եզրակացությամբ, առանձին թերացումները, արձանագրությունների ձեւակերպման սխալներն ընտրությունների վերջնական արդյունքների վրա ազդեցություն չեն գործել:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԳՈՉԱ ԼՈՐԹՔԻՓԱՆԻՉԵՆ՝ ՀԱՎԳԱՅԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ



Հազգային միջազգային քրեական դատարանում տեղի է ունեցել նորընտիր դատավորների երդման արարողությունը: Վեց նորընտիր դատավորների հետ երդում է տվել նաեւ Վրաստանի արդարադատության նախարար Գոչա Լորթքիփանիձեն:

« Գ ո չ ա Լորթքիփանիձեն առաջին վրացին է, ով

19-ին: Գոչա Լորթքիփանիձենի օգտին քվեարկել է 76 պատվիրակ: Նա Հազգային դատարանում դատավոր կլինի ինը տարվա ընթացքում: Գոչա Լորթքիփանիձեն կշարունակի աշխատել որպես Վրաստանի արդարադատության նախարար, մինչեւ նա պաշտոնապես կստանձնի իր լիազորությունները»,- ասված է արդարադատության նախարարության հայտարարության մեջ:

ընտրվել է Միջազգային քրեական դատարանի դատավոր: Մեր երկիրը Հազգային երբեք ներկայացուցիչ չի ունեցել: Ընտրություններն անց են կացվել անցյալ տարվա դեկտեմբերի

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԲԵՆՁԻՆԸ՝ 3 ԼԱՐԻ... ԵԹԵ ԱՅՈ, ԱՊԱ ԱՐԺԵԶՐԿԱՄԱՆ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԹԱՆԿԱՑՈՒՄ ԱՆԽՈՒՄԱՓԵԼԻ Է

Գլոբալ շուկայում նավթամթերքների գների աճը շարունակվում է եւ բացառված չէ, որ մեկ բարել նավթամթերքի արժեքը հասնի 80 դոլարի: Բնականաբար, սնան փոփոխությունն ազդեցություն կգործի նաեւ տեղական սպառման շուկայի գների վրա եւ չի բացառվում, որ սնան պայմաններում մեր երկրի սպառողների համար մեկ լիտր բենզինի գինը կազմի 2,9-3 լարի: Եթե «Ռեզուլար» մակնիշի բենզինի մեկ լիտրի արժեքը չբերնդավորված լցակայաններում կազմի 2,5 լարի, ապա, բնականաբար, դա կհանգեցնի սպառողական սպարանքների գների աճի, իսկ դա, իր հերթին, ազդեցություն կգործի արժեզրկման կտրուկ ավելացմանը:

Նման պայմաններում իրավիճակի կարգավորման միակ հնարավորությունը, տնտեսական հարցերի փորձագետ Դավիթ Էբրալիձեի ենթադրությամբ, կարող է լինել ՕՊԵԿ անդամ երկրների նավթի արդյունահանման կտրուկ ավելացման մասին որոշումը:

- Գլոբալ շուկայում վավերացվում է գների ավելացման միտումն եւ, հավանաբար, այդ միտումը կպահպանվի: Կարգավորման միակ ուղին ՕՊԵԿ անդամ երկրների կողմից արդյունահանման ծավալների ավելացումն է: Գտնում են, որ նավթի խոշոր արդյունահանող երկրները համաձայնության են հասել մեկ բարելի դինաց 70 դոլարի նշագծի հարցում: Բնականաբար, դա Վրաստանում կհանգեցնի սպառողական գների աճին եւ արժեզրկման ավելացմանը: Նման իրավիճակի կարգավորումը հնարավոր է, եթե նվազեցվի պահանջարկը, որը, առանց այդ էլ ցածր մակարդակի վրա է, ինչը կկարողանա լուրջ ազդեցություն գործել արժեզրկման փոփոխությունների

վրա,- հայտարարեց փորձագետը:

Վերլուծաբան Լիկա Շենգելիան գտնում է, որ գլոբալ շուկայում նավթամթերքի աճի միտման պահպանման դեպքում, մոտ օրերին մեկ բարելի արժեքը կսկսի տատանվել 60-70 դոլարի սահմաններում, ինչը ազդեցություն կգործի սպառողական շուկայի գների վրա:

- Եթե մեկ բարելի գինը հասնի 80 դոլարի, ապա, Վրաստանում մեկ լիտր բենզինի արժեքը կկազմի 3 լարի: Եվ դա այն պայմաններում, եթե լարի-դոլարի հարաբերակցությունը պահպանվի 3,33-ի շրջանակներում,- նշեց վերլուծաբանը՝ հավելելով, որ վառելանյութի պահանջարկի ավելացումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի կապակցությամբ, սահմանափակումների աստիճանական վերացմամբ:

Տեղական շուկայում նավթամթերքի հնարավոր թանկացման ազդեցության կապակցությամբ, իր անհանգստությունը հայտնեց նաեւ սպառողների իրավունքների պաշտպա-

նության ընկերության ղեկավար Բեքա Կեմուլարիան: Նա չի բացառում, որ համաշխարհային շուկայում գների ավելացման միտումը Վրաստանում հանգեցնի մեկ լիտր բենզինի համար 3 լարիի սահմանմանը, ինչը լուրջ հիմնախնդիրներ կստեղծի բոլոր սպառողների համար: «Մենք ոչ արդյունահանող երկիր ենք, եւ ոչ էլ վերանշակող գործարան ունենք, հետեւաբար, լրիվությամբ կախված ենք միջազգային գներից: Եթե կարողանանք կայունացնել ազգային տարադրամի կուրսը, այդ դեպքում, վառելիքի գնի տատանումը նվազ զգալի կլինի, որոշակիորեն կստեղծվի հավասարակշռված իրավիճակ, հակառակ դեպքում, հնարավոր են լուրջ տեղաշարժեր,- հայտարարեց Բեքա Կեմուլարիան:

Նշենք, որ գլոբալ շուկայում նավթամթերքի գնի կտրուկ աճը սկսվեց ընթացիկ տարվա փետրվարին եւ Միացյալ Նահանգների Տեխաս նահանգում, ուժեղ առանձանիքների պատճառով, նավթի արդյունահանումը դադարեցվեց: Նախամթերքի թանկացման վրա իր ազդեցությունը գործեց նաեւ կորոնավիրուսի դեմ պատվաստման պայմաններում համաշխարհային էկոնոմիկայի վերականգնման լավատեսական միտումը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ



ՕՐԵՆԱԴԻՐ

ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՎՐԱՍԱՆԻ «ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, խորհրդարանում գործում է աշխատանքային խումբ, որն ակտիվ աշխատանք է իրականացնում ընտրական օրենսգրքի բարեփոխման ուղղությամբ:

«Ընտրական օրենսգրքում» փոփոխություններ կատարելու օրինագծի հեղինակներն են խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցությունների՝ «Վրացական երազանքի», «Քաղաքացիների» և «Եվրոպացի սոցիալիստների» 10 պատգամավորներ:

Ի՞նչ փոփոխություններ են իրականացվելու օրենսգրքում:

Մասնավորապես, ենթադրվում է ավելացնել սակերբուլյուն համաճարակային կարգով ընտրված անդամների թիվը: Օրինակ, ինքնակառավարվող քաղաքներում՝ Թբիլիսիում, Ռուսթավիում, Քութայսիում, Փոթիում և Բաթումիում յուրաքանչյուր մեծամասնական անդամի հաշվով ընտրվելու է 4 համաճարակային պատգամավոր, իսկ մնացած մունիցիպալիտետներում յուրաքանչյուր մեծամասնականի հաշվով՝ 2 համաճարակային պատգամավոր:

Ընտրական հանձնաժողովների կենտրոնական և ընտրատարածքային մակարդակները կծեւվորվի 8 մասնագիտական և 9 կուսակցական անդամով՝ մեկ կուսակցություն, մեկ անդամ սկզբունքով: ԿԸԳ-ի եւ ընտրատարածքային հանձնաժողովներում անդամներ կնշանակեն այն կուսակցությունները, որոնք թեկուզ մեկ անդամով ներկայացված են խորհրդարանում:

Բանցի այդ կներդրվի ընտրողների էլեկտրոնային գրանցման և ընտրական քվեաթերթիկների էլեկտրոնային հաշ-

վարկման համակարգ:

Կարգելվի ընտրատեղամասի փաստաթղթերի կնքումից հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև տարածքային հանձնաժողովների կողմից ուղղումների արձանագրության կազմումը՝ առանց փաստաթղթերի բացման և քվեաթերթերի վերահաշվարկման:

Անկախ բողոքարկումների, 73 ընտրատարածքներից, պատահականության սկզբունքով, կընտրվի 5-ական տեղամաս, որոնց ձայները կվերահաշվարկվեն: Ընդհանուր հաշվով, վերահաշվարկ կանցկացվի 365 տեղամասում, ինչը կազմում է ընդհանուրի 10 տոկոսը:

Ինչ վերաբերում է բողոքների ներկայացման և քննարկման ժամկետներին, ապա այն ավելացվում է: Յնարավոր կլինի դատական հայց ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Յնարավոր կլինի ԿԸԳ-ի կողմից խախտման արձանագրությունը կազմելուց հրաժարվելու դեմ բողոքել դատարանում:

Ընտրական տեղամասերից 100 մետր հեռավորությամբ կարգելվի մարդկանց հավաքը և ընտրողների գրանցումը, նախընտրական քարոզարշավի համար հանրային ծառայողներին հավաքելը: Կընդլայնվի նախընտրական քարոզարշավին մասնակցելու արգելք ունեցող հանրային ծառայողների շրջանակը:

Նշենք, որ այս օրինագիծը ներկայացվելու է խորհրդարանի հաստատմանը:

ՆԻՆՈՑՄԻՆՂԱ

ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՄԵՐ ԿԱՆԱՅՔ ԱԿՏԻՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՆ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ»

Կորոնավիրուսի համավարակի հայտարարման առաջին իսկ օրերին, Նինոծմինդայի մունիցիպալիտետում, ակտիվ աշխատանք իրականացվեց վարակի կանխման, համավարակի դիմակայության գործում կանանց ակտիվ ներգրավման ուղղությամբ: Covid-19 դեմ պայքարում կանանց դերի մասին է Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանի հետ հարցազրույցը:

- Տիկին Անի, կորոնավիրուսի համավարակի կապակցությամբ, կարծես, երկրորդական պլան են մղվել շատ հացեր, մասնավորապես, գեներային իրավահավասարության հետ կապված հիմնախնդիրը: Ի՞նչ կասե՞իք այդ մասին:

- Նախ, կցանկանայի մեր բոլոր կանանց շնորհավորել անցած տոների՝ Մայրության օվա և Կանանց միջազգային օրվա կապակցությամբ: Օրվա կապակցությամբ, քաղաքապետարանի աշխատակիցների, մասնավորապես, քաղաքապետարանի մշակույթի ծառայության պետ Լեոն Կարդանյանի, գեներային իրավահավասարության բաժնի պետ Գայանե Սերոբյանի, ծառայության աշխատակիցների հետ հանդիպում ունեցանք մունիցիպալիտետի 11 բազմազանակ մայրերի հետ: Նրանց շնորհավորեցինք Կանանց միջազգային օրվա առթիվ և հանձնեցինք հուշանվերներ:

Ինչ վերաբերում է հարցին, ապա, դա այդպես է: Գլոբալ համավարակը, իրոք, մեծ ազդեցություն գործեց համաշխարհային հանրության վրա: Բացառություն չկազմեց նաև Վրաստանը: Բոլորի հետ միասին համավարակի դեմ ակտիվ պայքար ծավալվեց նաև մեզ մոտ: Այդ առումով, Նինոծմինդայի մունիցիպալիտետում անցկացվեցին մի շարք միջոցառումներ:

Երբ Վրաստանում հայտարարվեց համավարակ, մեր մունիցիպալիտետն անցավ խստացված աշխատակարգի: Անմիջականորեն մունիցիպալիտետի բնակչությանը մասնաճանաչման տեղեկատվություն ներկայացրինք համավարակի տարածման և դրա դեմ պայքարի վերաբերյալ: Այդ գործում ակտիվ ներգրավվեցին մունիցիպալիտետի գեներային



խորհրդի անդամները:

Մասնավորապես, համավարակի պայմաններում քաղաքացիների վարքի կանոնների տեղեկացման նպատակով, քաղաքապետարանի ղեկավարները, գեներային խորհրդի անդամները ձեռնամուխ եղան տեսահոլովակների ստեղծմանը, որոնք տեղական լրատվամիջոցների, գեներային բաժնի ֆեյսբուք էջերի միջոցով ներկայացվեցին բնակչությանը: Գործարկվեց նաև թեժ գիծը: Մի խոսքով, կանանց ազդեցությունը մշտնապես էր:

- Կոնկրետ, ի՞նչ հարցերի կարգավորմանը նպաստեց գեներային խորհրդի անդամների ներգրավվածությունը:

- Բավական է մշել, որ մունիցիպալիտետի «Կանանց տեղեկատվական կենտրոնի» կողմից, համավարակի վերաբերյալ անցկացվեցին օնլայն միջոցառումներ, որոնց մասնակցեցին փորձառու հոգեբաններ: Նման հանդիպումներն անցկացվեցին շաբաթական երկու անգամ տարբեր թեմաներով: Ընդհանուր առմամբ, օնլայն միջոցառմանը մասնակցեց շուրջ 60 կին: Վերոնշյալ կազմակերպության

կողմից, օնլայն միջոցառումներ անցկացվեցին նաև մունիցիպալիտետի հանրային դպրոցների բարձր դասարանների աշակերտների, մանկավարժների մասնակցությամբ:

«Աջակցություն» (NCDC) կազմակերպության հետ անցկացվեցին հանդիպումներ երիտասարդ կանանց հետ: Յնդիպմանը բաժանվեցին հայերեն և ռուսերեն բրոշյուրներ՝ համավարակի լարված պայմաններում երիտասարդ կանանց աջակցելու և վերաարտադրողականության գործառույթը պահպանելու վերաբերյալ:

- Յնավարակը հանգեցրեց տնտեսական որոշ սահմանափակումների: Բնականաբար, փոքր ու միջին գործարարները, որոնց թվում քիչ չէին կանայք, տուժեցին: Ի՞նչ քայլեր ձեռնարկվեցին նրանց օգնելու համար:

- Յնավարակի տարածման ժամանակահատվածում քաղաքապետարանն անտարբերության չմատնեց մունիցիպալիտետում փոքր գործարարությանը զբաղվող կանանց: «HERA» կազմակերպության հետ միասին, ընտրվեց տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող (հագուստեղեն, գեղեցկության սրահներ, անասնապահություն, մեղվաբուծություն և այլն) հինգ կին, ովքեր սկսեցին զբաղվել փոքր ու միջին գործարարության հետ կապված հարցերի կարգավորմամբ:

Ավելացնենք, որ Նինոծմինդայի մունիցիպալիտետի հետ միասին, 2020 թվականի դեկտեմբերի 28-ին, օնլայն պայմանակարգով ստորագրեց «Տեղական պայմաններում կանանց և տղամարդկանց իրավահավասարության մասին եվրոպական խարտիայի» ընդունման պահանջը, որը ներկայումս գործող օրենք է մեր մունիցիպալիտետում:

ՍՐՐՈՒՅԻ ՍԱՆԱՄԱՆՅԱՆ  
Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կազմակերպական բաժնի պետ

ԿՐԹԱՎԱՆ



ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՄԱՍՆԱՎՈՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՇՎԵՐՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ

Մասնավոր դպրոցն իրավունք կունենա, ֆինանսական պարտք ունեցող աշակերտի կարգավիճակը դադարեցնել, ֆինանսական պարտքի առաջացման կիսամյակի ավարտից մինչև հաջորդ կիսամյակի սկիզբ:

Յնմապատասխան փոփոխությունները ներառված են «Յնարային կրթության մասին» օրենքում, որը նախաձեռնել են մեծամասնության անդամներ Շալվա Պապուաշվիլին և Գիորգի Ամիլախվարին:

Օրենքի նախագիծը նախատեսում է, որ մասնավոր դպրոցը պարտավոր է, աշակերտի կարգավիճակի դադարեցման մասին կան նրա այլ դպրոց տեղափոխվելու ցանկության դեպքում, որոշում ընդունելու օրը, նշվածի մասին գրավոր ձեռով տեղեկացնել նախարարությանը, և աշակերտի անձնական գործը փոխանցել այլ դպրոցին պահանջից հաջորդ օրը:

Փոփոխություններով մասնավոր դպրոցը նաև պարտավոր է, եթե աշակերտը ցանկանում է մեկ այլ դպրոց տեղափոխվել, աշակերտի անձնական գործը փոխանցել ըն-

դունող դպրոցի հարցումից հաջորդ աշխատանքային օրը: Օրինագիծը սահմանում է նաև, որ վերոհիշյալ պարտավորությունների չկատարումը, հիմք կդառնա մասնավոր դպրոցի արտոնագրումը դադարեցնելու համար:

Ինչ վերաբերում է մեկ այլ մասնավոր դպրոցում կարգավիճակից զրկված աշակերտի ուսումը չչարունակելու դեպքին, նախագծում նշվում է, որ նախարարությունը օրենքով սահմանված կարգով ապահովում է կարգավիճակից զուրկ աշակերտի հանրակրթական դպրոցում կրթություն ստանալու հնարավորությունը:

«Վերջին տարիների դպրոցական պրակտիկայի համաձայն, մասնավոր դպրոցի աշակերտների ծնողները/օրինական ներկայացուցիչները, շատ դեպքերում, տնտեսական

կան այլ խնդիրների պատճառով չեն կատարում մասնավոր դպրոցի հետ պայմանագրով նախատեսված իրենց պարտավորությունները և ֆինանսական պարտքեր են ունենում, մինչդեռ մասնավոր դպրոցը չունի իրավական լծակներ, որ դադարեցնի ծառայությունները պայմանագիրը չկատարելու պատճառով: Բացի այդ, գործնականում կան դեպքեր, երբ աշակերտը չունի ֆինանսական պարտք, բայց ծնող/օրինական խնամակալը այլևս չի ցանկանում, որ աշակերտը շարունակի իր ուսումը մասնավոր դպրոցում՝ տարբեր պատճառներով: Նման դեպքում անհրաժեշտ է ստեղծել մեխանիզմ, որը կապահովի փոխանցման փաստաթղթերի ժամանակին փոխանցումը մեկ այլ ընդունող դպրոց, որպեսզի աշակերտը ֆինանսական պարտքեր չունենա: Ներկայացված օրենքի նախագիծը նպատակ ունի շտկել այդ իրավական թերությունները»,- բացատրում են օրինագծի նախաձեռնողները:

ԱՉԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՅՏԱՎԵՅՎԵԼ ԵՆ ԱՌՎԵԼԱԳՈՒՅՆ ԲԱՆԵՐ ՈՒ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գնահատման և քննությունների ազգային կենտրոնը սահմանել է 2021 թվականի ազգային քննությունների և ուսանողների դրամաշնորհային մրցույթի առավելագույն բալերն ու քննության տեւողությունը:

Ինչպես ասվում է կենտրոնի կողմից տարածված հայտարարության մեջ՝ դիմորդը նվազագույն շեմը հարթահարած կհամարվի, եթե օտար լեզվի եւ մաթեմատիկայի քննություններում ստանա սահմանված առավելագույն բալի 20 տոկոսից ավելին, ընդհանուր ունակությունների դեպքում՝ 30 տոկոսից ավելին, իսկ մնացած բոլոր առարկաներից՝ 25 տոկոսից ավելին:

Ինչ վերաբերում է քննությունների առավելագույն բալին և տեւողությանը, ապա, վրաց լեզվի եւ գրականության քննության առավելագույն բալը՝ 70, իսկ տեւողությունը՝ 3 ժամ 45 րոպե, ընդհանուր ունակություններ՝ 80 բալ, բանավոր տեւողությունը՝ 1 ժամ 35 րոպե, մաթեմատիկա՝ 80 բալ, 1 ժամ 35 րոպե, օտար լեզուներ՝ 80 բալ, 2 ժամ 30 րոպե, գրականություն՝ 70 բալ, 4 ժամ, մաթեմատիկա՝ 51 բալ, 3 ժամ, պատմություն՝ 60 բալ, 2 ժամ 40 րոպե, աշխարհագրություն՝ 60 բալ, 2 ժամ 40 րոպե, կենսաբանություն՝ 70 բալ, 2 ժամ 30 րոպե, քիմիա՝ 63 բալ, 3 ժամ, ֆիզիկա՝ 63 բալ, 3 ժամ:

Ուսանողների դրամաշնորհային մրցույթի համար՝ 42 բալ, 2 ժամ 35 րոպե, արվեստ՝ 70 բալ, 3 ժամ, քաղաքացիական կրթություն՝ 60 բալ, 3 ժամ 10 րոպե: Աբխազերեն՝ 70 բալ, 3 ժամ 45 րոպե: Օսերեն՝ 70 բալ, 3 ժամ 45 րոպե: